# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք
Հասցե-գ.Ղուրսալի (093586276)
Էլ. փոստ ghursali.lori@mta/gov.am

054/41
22.02.2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի ղեկավարի թիվ 2 և թիվ 3 որոշումները

Առդիր՝ 4 թերթ:

Ղուրսալի համայնքի
ղեկավար՝ Մ.Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալ համայնք
հասցե - գ. Ղուրսալ
093-58-62-76
Էլ. փոստ ghursali.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» փետրվարի 2019 թ. թիվ 2

## ԹԵՅՄԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1184783 վկայականը և Թեյմինե Անտոնյանի 15.02.2019 թվականի թիվ 3 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թեյմինե Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Ղուրսալ համայնքի 5 փ. 7 հողամաս հասցեում գտնվող 06-068-12-5 կադաստրային ծածկագրով 0.309 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել Ղուրսալի համայնք 5 փ. 7 հողամաս հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Ղուրսալ համայնքի
ղեկավար՝ Միեր Մինասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալ համայնք
հասցե - գ. Ղուրսալ
093-58-62-76
էլ. փոստ ghursali.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» փետրվարի 2019 թ. թիվ 3

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 23.01.2019թ. թիվ 01/107.4/00372-2019 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել <<ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների>> պլանը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար-մասնագետին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ղուրսալի համայնքի ղեկավարին:

Ղուրսալ համայնքի
ղեկավար՝ Միեր Մինասյան

Հավելված.
Ղուրսալի համայնքի ղեկավարի
19.02. 2019 թվականի
թիվ 3 որոշման

# ՊԼԱՆ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I ԱԻՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 1.1 | ՀՀ վարչապետի 2014թ. սեպտեմբերի 26-ի N 934-Ն որոշման համաձայն՝<br>Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | հուլիս | Համայնքի ղեկավար | Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով | | |
| 1.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպա-նության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի տարածքում հաշվառված ինժեներական | Տարվա ընթացքում | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | տեխնիկայի և տրանսպորտային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | | | | | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **2. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 2.1 | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Ղուրսալի համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ | մինչև 27.12 | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ստորագրություն, անուն, ազգանուն

ՂՈՒՐՍԱԼԻ ... ՀՀ ԼՈՌՈՒ ... 0 80 954